ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/3388/02/24 ք. Երևան
6 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արտուշ Ավագյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործով ըստ հայցի <<Ագաստ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին հարցը

ՊԱՐԶԵՑ

<<Ագաստ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչների կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 02.05.2024թ.-ին և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանները հատուկ հայցային վարույթներն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն ենթաբաժնի դրույթներով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:
Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքեր առկա չեն և գտնում է, որ այն ենթակա է վարույթ ընդունման և հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով գնումների հետ կապված վեճերով վարույթների համար նախատեսված առանձնահատկությունները, Դատարանը գտնում է նաև, որ միաժամանակ անհրաժեշտ է Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 201-րդ, 202-րդ, 234.5-րդ, 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Գործը քննել հատուկ հայցային վարույթի կարգով:
3. Պատասխանող «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պահանջել ՀՀ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
4. Որոշման նախորդ՝ 3-րդ, կետում նշված ապացույցները պատասխանողի կողմից պետք է ներկայացվեն սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
5. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 17.06.2024թ., այն հրապարակելով www.court.am դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արտուշ Ավագյան

Digitally signed by
ARTUSH AVAGYAN 2601940050
Date: 2024.05.13 14:35:34 mID

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am